

ՄԵՆԻՄԱՍՏ ԵՎ ԲԱԶՄԻՄԱՍՏ, ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ ՀՈՒՆԵՑՈՂ ԲԱՌԵՐԻ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ
ԸՍՏ ԵՂ. ԱՂԱՅԱՆԻ «ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ
ԲԱՌԱՐԱՆԻ» ՏԿՅԱԼՆԵՐԻ

Լեզվաբանական գիտության մեջ ևս կան խնդիրներ, որոնց վերջնական այս կամ այն պատասխանը կարող է հաստատվել միայն գոնե տվյալ փուլի համար մատչելի փաստական նյութի վիճակագրական ուսումնասիրությամբ: Նման առաջին խնդիրը՝ ժամանակակից հայերենում մենիմաստ բառերն են ավելի շատ, թե՞ բազմիմաստ, փաստերի վրա հիմնված լուծում չի ստացել:

Եղ. Աղայանն այն համոզմունքին էր, որ մեր լեզվի բառապաշարի «բառերի մեծագույն մասը բազմիմաստ բառեր են և մենիմաստ բառերը շատ փոքր քանակությամբ են կազմում»¹:

Նա, թերևս, այն դրույթով էր առաջնորդվում, որ բազմաթիվ բառեր են ավանդվել խոր հնադարից և «որքան երկար է բառի «կյանքը», այսինքն՝ նրա գործածությունը լեզվի մեջ, այնքան հարուստ է նրա բովանդակությունը և այնքան շատ են նրա իմաստները»²: Այս մոտեցումն են ունեցել նաև այլ լեզվաբաններ³:

Հատկանշական է, սակայն, որ Եղ. Աղայանի նշված կարծիքը բոլորովին էլ չի համապատասխանում իր իսկ կազմած բառարանի⁴ տվյալներին, համաձայն որի ժամանակակից հայերենում մենիմաստ բառերն անհամեմատ ավելի շատ են, քան բազմիմաստները: Որպես ապացույց ասվածի՝ ուզում ենք ներկայացնել մեր հաշվումների արդյունքները, որոնք չեն սահմանափակվում բառարանի որոշ էջերի տվյալներով միայն, այլ ընդգրկում են նշված բառարանն ամբողջությամբ:

Այսպես՝ Եղ. Աղայանի հիշյալ բառարանը պարունակում է 135.600 բառ, որոնցից որպես բազմիմաստ են ներկայացված ընդամենը 38.000-ը (ավելի ստույգ՝ 38.213), իսկ մենիմաստ՝ շուրջ 97.000-ը (ավելի ստույգ՝ 97.387):

¹ Եղ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 47:

² Նույն տեղում, էջ 48:

³ Տես Ս. Աբրահամյան, ժամանակակից գրական հայերեն, Երևան, 1981, էջ 35-36: Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1979, հտ. I, էջ 193:

⁴ Եղ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, 1-2մ., Երևան, 1976:

Ուրեմն՝ վստահ կարող ենք փաստել, որ ժամանակակից հայոց լեզվում (ըստ նշված բառարանի) մենիմաստ բառերն ավելի շատ են, քան բազմիմաստները: Իհարկե, ընդունում ենք, որ գործածության հաճախականության տեսակետից մենիմաստ բառերը զիջում են բազմիմաստ բառերին (չէ որ բազմիմաստ են մեծ մասամբ հիմնական բառաֆոնդին պատկանող բառերը), և գուցե այս հանգամանքն է նաև պատճառը մշտապես տարածված այն կարծիքի, թե բազմիմաստ բառերն ավելի շատ են: Իրականում, արդի հայերենում մենիմաստ բառերը բավական մեծ թիվ են կազմում. չէ որ մենիմաստ են մի շարք թռչունների, ընտանի և վայրի կենդանիների, բույսերի, պտուղների անուններ, բազմաքանակ գիտաբառեր, հապավումները, նաև բարդ և բաղադրյալ բազմաթիվ բառեր:

Իսկ ինչպիսի՞ն է բառերի բուն և փոխաբերական իմաստների հարաբերությունը: Մենք հաշվել ենք նաև նշված բառարանում առկա այն բոլոր բառերի քանակը, որոնք հանդես են գալիս փոխաբերական նշանակություններով: Արդյունքում պարզվել է, որ բազմիմաստ բառերի մոտ 21%-ը, այսինքն՝ շուրջ 8.000 բառ, էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» ունի փոխաբերական իմաստներ՝ *փխբ.* տարբերանշանով: Եվ, եթե նշված բառերն էլ դիտարկենք ըստ խոսքիմասային պատկանելության, ապա հաճախականության տեսակետից առաջին տեղում կարելի է համարել ածական փոխաբերությունները, այնուհետև գոյական, բայ, մակբայ փոխաբերությունները: Բայց ինչո՞ւ ենք միայն այս 4 խոսքի մասերն առանձնացնում. մի՞թե մյուս խոսքի մասերի կազմում առկա բառերը փոխաբերաբար հանդես չեն գալիս:

Այսպես՝ փոխաբերաբար, թեև սակավ, գործածվում են նաև դերանունների, թվականների, ծայնարկությունների որոշ տեսակներ և մշտապես հանդես են գալիս այլ խոսքիմասային արժեքներով: Ինչպես՝ *ես* անձնական դերանունը բառարանում հիմնական իմաստից բացի ունի նաև փոխաբերական «անհատ» իմաստային տարբերակը, և արդեն ոչ թե դերանուն է, այլ գոյական, այսինքն՝ դերանունները փոխաբերական իմաստով գործածվելիս այս խոսքի մասի սահմաններից դուրս են գալիս՝ ստանալով այլ խոսքիմասային արժեք: Նույնը կարելի է ասել թվականների մասին: Օրինակ՝ *հազար* քանակական թվականը հանդես է գալիս փոխաբերաբար և նշանակում է «փառքի՝ փառաբանության տոն» («Այդ տարիներին, ... Տերյանի հազարն էր»)՝⁵ ուրեմն՝ փոխաբերացման արդյունքում թվական խոսքի մասը, որպես այդպիսին, այլևս չի ընկալվում. անցում է կատարում գոյական խոսքի մասին: Նույն կերպ, *երկրորդ* դասական

⁵ Օրինակը բերվում է էդ. Աղայանի նշված բառարանից:

թվականը, փոխաբերական («փոխանորդ, տեղակալ») իմաստ ստանալով, գործածվում է որպես գոյական: Չայնարկություններից մի քանիսը ևս հանդես են գալիս որպես փոխաբերություններ, և դարձյալ այլ խոսքի մասի արժեքներով: Ինչպես՝ *վայ* և *փահ-փահ* ձայնարկությունները, փոխաբերական իմաստներ ստանալով, դառնում են գոյականներ («վայ»-ը՝ որպես սուգ, ողբ, «փահ-փահ»-ը՝ որպես գովասանքի արտահայտություն): Իսկ, օրինակ, *ճռթ* ձայնարկությունը ձևաբանական երկարժեքություն է ցուցաբերում՝ հանդես գալով որպես և ածական, և գոյական (այն է՝ «պարծենկոտ, սնապարծ»): Հետևապես, կարող ենք ասել, որ դերանուն, թվական և ձայնարկություն խոսքի մասերին պատկանող բառերը, փոխաբերական նշանակություններ ստանալով, միայն հնչյունական կազմով են մնում նույնը: արտահայտած իմաստային արժեքներով պատկանում են այլ խոսքի մասի (գոյական, ածական):

Այսպիսով, վերը նշված 4 խոսքի մասերին համապատասխան, ժամանակակից հայերենում առավել շատ փոխաբերաբար գործածվում են ածականները, հետո գոյականները, բայերը և մակբայները: Պատկերը նույնն է նաև մեր կողմից գեղարվեստական գրականությունից և մամուլից դուրս գրված օրինակներում: Ընդ որում՝ այդ օրինակների հիման վրա առանձնացրել ենք նաև փոխաբերաբար գործածվող և առավել հաճախ հանդիպող բառերի մի խումբ՝ ցույց տալու համար վերջիններիս գործածության հաճախականությունը ըստ տարբեր հեղինակների: Ներկայացնենք հետևյալ աղյուսակով՝:

փոխաբերաբար գործածվող բառեր	փոխաբերական նշանակությունները	գործածության հաճախականությունը՝ ըստ տարբեր հեղինակների
դառը	անախորժ, տհաճ, թունոտ, դժնդակ, աղիոգորմ, սրտաճմլիկ	/ՄՄ(1)(143), ՀՍ(2)(5,360), Ա.Շ(2)(310,428), Վ.Փ(1)(427), Հ.Բ.(1)(322), Ս.Զ(1)(306), Ավ Իս(1)(106), Հ.Թ (1)(183), Վ.Տ(41)(97), Ռ.Դ (1)(63), Ս(2)(23,342)/
թթու	դառնացնող, վշտացնող, տրտուճ, անքարեհամբույր	/Ա.Շ(1)(269), Դ.Դ(1)(231), Ն.Դ(1)(520), Ր(1)(398)/
լուսե	ժարգ, վճիտ, գեղեցիկ, լուսազեղ	/Վ.Եր(1)(109), Ե.Զ(1)(299), Վ.Տ(1)(72)/
կծու	խայթող, վիրավորող, հեզմական, խիստ, սաստիկ, այրող, ուժեղ	/ՀՄ(1)(142), Ա.Շ(5)(43, 130, 310, 338, 428), Ս(1)(147), Վ.Փ(3)(67, 372, 384), Ա.Ա(1)(366), Օ.Բ (1)(349)/
սառը	կրքից, ավունից զուրկ, հավասարակշռված, ան-	/Գ.Դ(1)(139), Վ.Եր(1)(742), Վ.Փ(1)(416), Օ.Բ (2)(375, 345),

⁶ Աղյուսակի 3-րդ սյունակի առաջին փակագծերում նշվում է բառի փոխաբերական գործածության քանակը, մյուս փակագծերում՝ չեքը այն ստեղծագործությունների, որոնցում հանդիպում է տվյալ փոխաբերությունը:

	տարբեր, սահմանադրված, ջերմությունից գոյություն ունի սիրով	Հ.Ս(1)(50)/
սև	մռայլ, չարագուշակ, հոգսերով լի, չարաղետ, դաժան, վատ, ոչ որակյալ, սևագործ, սուգ	/Վ.Եր(1)(71), Ավ.Իս(1)(113), Ե.Չ(1)(21), Հ.Թ(2)(35, 66), Վ.Տ(1)(31), Վ.Դ(1)(275)/
տաքանալ	գրգռվել, հուզվել, բորբոքվել, մոլեգնել	/Վ.Եր(1)(691), Ա.Շ(3)(58, 146, 159), Ս(2)(137, 151), Գ.Տ.Գ(2)(238, 442)/
փայլաս	թուլլ, կամագուրկ(մարդ)	/Խ.Դ(2)(513, 538), Հ.Ս(1)(450)/
փլվել	ուժասպառ լինելով ընկնել, անփութորեն մեկնվել՝ փռվել, գլորվել, վայր ընկնել, հուզմունքից փրծկալ	/Գ.Դ(1)(40), Վ.Եր(1)(741), Հ.Թ(2)(222, 323), Ս.Գ(1)(240), Հ.Շ(1)(99)/
փչել	շեշտված կերպով դրսևորվել, ստատ ասել, սուտումուտ բաներ դուրս տալ	/Վ.Եր(1)(659), Գ.Դ(1)(183), Դ.Չ(1)(231)/

Փոխաբերական նշանակությամբ առավել հեշտորեն և հաճախակի գործածվող բառերը, ըստ բառապաշարի որոշ շերտերի, մասնակիորեն դասակարգվել են ժամանակակից հայերենում⁷, սակայն հեղինակն այն համոզմունքն է հայտնել, որ տվյալ դասակարգումը չի կարելի ամբողջական համարել, քանի որ չափազանց մեծ թիվ են կազմում փոխաբերական իմաստներով գործածվող բառերը: Բացի այս բառիմաստները ժամանակի ընթացքում կարող են ենթարկվել. բառի տվյալ փոխաբերական նշանակությունը կարող է ժամանակի ընթացքում այդպիսին չդիտվել, կամ որևէ բառ, որ երբևէ չի գործածվել փոխաբերաբար, կարող է փոխաբերական նոր նշանակություն ստանալ: Օրինակ՝ վերջերս, հատկապես մամուլում և ժողովրդագիտական լեզվում լայն տարածում ունեն որոշ բառերի փոխաբերական գործածությունները, ինչպես՝ *տանիք*⁸ որպես «ղեկավար, պաշտպան», *կնքահայր*⁹ որպես «հովանավոր» և այլն: Օրինակներ՝ «Հասկանալի է, որ այդ հարկային գերավճարները... նրանք՝ ովքեր «տանիք» ունեն» (Հ.Ժ., 166): «Ամեն չվերթ ուներ իր տանիքը» (Չ. իշ., 408): «Այսինքն՝ հետադիմական այս պրոցեսի կնքահայրը բանակի ղեկավարությունն էր» (Իր., 86):

Այսպիսով՝ ժամանակակից հայերենում, ի տարբերություն տարածված կարծիքների, մենիմաստ բառերն անհամեմատ ավելի շատ են, քան բազմիմաստները: Բազմիմաստ բառերի շուրջ 21%-ը (ըստ էղ. Աղայանի բառարանի) գործածվում է փոխաբերաբար, որոնք, ըստ խոսքիմասային պատկանելության, առավել հաճախ ածականներ են, հետո նոր միայն՝ գոյականներ, բայեր և մակբայներ:

⁷ Տե՛ս Ս. Սեղունյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1948, էջ 104-105: